Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի հունվարի 22-ի, ժամը 13:00-ի նիստի
N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Մագիստրոսի որոշ կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը դադարեցնելու և բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերի լիցենզիաների ներդիրներում փոփոխություններ կատարելու մասին հարցը:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Վ.Գրիգորյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1) Դադարեցնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին շնորհված մագիստրոսի կրթական ծրագրով իրականացման **«Սերիա Մ N 0016»** լիցենզիայի **«N 001»** ներդիրում ներառված ներքոբերյալ կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը:

1. «**011102.05.7** Կրթության կառավարում»,
2. «**031101.05.7** Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում»,
3. «**031101.03.7** Ձեռնարկությունների տնտեսագիտություն»,
4. «**031101.07.7** Աշխատանքի տնտեսագիտություն»,
5. «**031101.13.7** Ձեռնարկատիրական գործունեություն»,
6. «**031101.14.7** Միկրոտնտեսագիտական վերլուծություն»,
7. «**041201.07.7** Հարկային վարչարարություն»,
8. «**041201.09.7** Պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում»,
9. «**041201.10.7** Կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառավարում»,

10. «**041301.03.7** Պետական և մունիցիպալ կառավարում»,
11. «**041301.10.7** Հակաճգնաժամային կառավարում»,
12. «**041301.14.7** Սոցիալական կառավարում»,
13. «**041301.20.7** Հողագույքային հարաբերություններ»,
14. «**041401.03.7** Մարքեթինգային հետազոտություններ»,
15. «**041401.02.7** Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն»,
16. «**041401.05.7** Կոմերցիա»,
17. «**041401.06.7** Բիզնեսի կազմակերպում»,
18. «**056201.01.7** Վիճակագրություն»,
19. «**056201.02.7** Տնտեսության վիճակագրական վերլուծություն և կանխատեսում»,
20. «**056201.03.7** Կիրառական վիճակագրություն և մտավոր վերլուծություն»:

2) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին շնորհված բակալավրի կրթական ծրագրով իրականացման **«Սերիա Բ N 0015»** լիցենզիայի **«N 001»** ներդիրում կատարել հետևյալ փոփոխությունը՝ համալսարանին տրամադրված լիցենզիոն ընդհանուր տեղերի պահպանմամբ.
«5» 041401.01.6 «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի առկա ուսուցման տեղերը ուսումնառության 4 տարիներից յուրաքանչյուրի համար սահմանել **150-ը**, իսկ հեռակա ուսուցման տեղերը ուսումնառության 5 տարիներից յուրաքանչյուրում սահմանել **75-ը**:

3) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին շնորհված մագիստրոսի կրթական ծրագրով իրականացման **«Սերիա Մ N 0016»** լիցենզիայի **«N 001»** ներդիրում կատարել հետևյալ փոփոխությունները՝ համալսարանին տրամադրված լիցենզիոն ընդհանուր տեղերի պահպանմամբ.

1. «**031101.01.7** Տնտեսագիտության տեսություն» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը սահմանելով 1,5 տարի:

2. «**031101.04.7** Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 1,5 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2 տարի:
3. «**031101.08.7** Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը սահմանելով 2 տարի:
4. «**031101.15.7** Տնտեսության պետական կարգավորում» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 1,5 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2 տարի:
5. «**041201.03.7** Հանրային ֆինանսներ» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 2 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:
6. «**041201.04.7** Կորպորատիվ ֆինանսներ» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը սահմանելով 2 տարի:
7. «**041201.05.7** Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 10 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 2 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:
8. «**041201.08.7** Մաքսային վարչարարություն» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 30 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում

սահմանելով 1,5 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2 տարի:

9. «**041301.04.7** Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 70 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 1,5 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2 տարի:
10. «**041301.11.7** Զբոսաշրջության կառավարում» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 2 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:
11. «**041301.13.7** Նախագծերի կառավարում» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը սահմանելով 2 տարի:
12. «**041301.15.7** Կառավարման տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 2,0 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:
13. «**041301.16.7** Պետական գույքի կառավարում» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը սահմանելով 2 տարի:
14. «**041301.17.7** Հանրային կառավարում» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 30 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը սահմանելով 1,5 տարի:
15. «**041301.27.7** Մարդկային ռեսուրսների կառավարում» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 20 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 15 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 1,5 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2 տարի:

16. «**041401.04.7** Մարքեթինգային հաղորդակցություններ» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 50 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 50 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 2 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:
17. «**056201.04.7** Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» կրթական ծրագրում առկա ուսուցման համակարգում հատկացնել 25 կրթական տեղ, հեռակա ուսուցման համակարգում հատկացնել 25 կրթական տեղ՝ ուսուցման տևողությունը առկա ուսուցման համակարգում սահմանելով 1,5 տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 2 տարի:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. հունվարի 22

Երևան